ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի _Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 ՄԱՐՏԻ 2018թվականի N 02-Ա

ՄԱՐԻՆԵ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> 176-րդ հոդվածով, և հիմք ընդունելով Մարինե Մեխակյանի դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի մանկապարտեզի տնօրեն Մարինե Մեխակյանին 2018 թվականի մարտի 15-ից մինչև 2018 թվականի ապրիլի 03-ը ներառյալ տրամադրել իր հաշվին արձակուրդ:

2. Պարտականությունները վերապահել կատարելու Արագածի մանկապարտեզի դաստիարակ Տաթև Ավագյանին:

3. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի ապրիլի 04-ից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18թ. մարտ 12
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 13

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումը և Արագած համայնքի բնակիչ Վիկտորյա Շմավոնի Բաղդասարյանի դիմումը. որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչ Վիկտորյա Շմավոնի Բաղդասարյանին պատկանող 01-014-0046-0006 ծածկագրով0.1150 հա տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տանը տալ Հաղթանակի պողոտա, թիվ 31 հասցե-համարանիշը:

2. Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18 թ. մարտի 15
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2018թվականի N 14

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով. որոշում եմ՝

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 23-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի քարտուղար Դ. Մկրտչյանին հանձնարարել.

- *3 օրյա ժամկետում նախագծում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ և նախահաշիվներ*
- *նիստի օրակարգի նախագծի, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստը սկսելուց առնվազն 1 օր առաջ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ ավագանու անդամներին տրամադրելու համար*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18թ. մարտի 20
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2018թվականի N 15

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի չորրորդ մասով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով , որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, շինության տեխնիկական վիճակը բավարար է անվտանգ շահագործման համար, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վարդան Մարցելուսի Սայադյանի 2018 թվականի փետրվարի 07-ի դիմումը:

Որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի Հաղթանակի պողոտա 30/1 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման Արագած համայնքի սեփականություն հանդիսացող 48.8 քմ. առևտրի սրահը :

2.Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը շինության համար 377.712 /երեք հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր տասներկու / ՀՀ դրամ է, իսկ հողամասի համար 29.040 /քսանինը հազար քառասուն / ՀՀ դրամ է:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում վճարվի Արագած համայնքի այլ հիմանական միջոցների եկամուտների 900325163203 հաշվեհամարին և հողի օտարումից եկամուտների 900325163138 հաշվեհամարին: Չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված սպորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Արագած համայնքի ղեկավարին, կամ դատական կարգով ՀՀ Վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18 թ. մարտի 21
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2018թվականի N 16

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչներ Վիկտորյա Շմավոնի Բաղդասարյանը /ծնված 01.01.1932թ./, Գագիկ Աղասու Ազատյանը /ծնված 24.01.1964թ./, Շուշան Ռաֆիկի Ազատյանը /ծնված 09.04.1971թ./, Արման Գագիկի Ազատյանը /ծնված 04.08.1989թ./ և Սեդա Գագիկի Ազատյանը /ծնված 24.12.1990թ./ դիմել են Հաղթանակի պողոտա թիվ 31 հասցեում գտնվող իրենց պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 31.03.1991թ. թիվ 6 որոշման/ 0.1150 հա օրինական հողամասի վրա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ. , հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

Որոշում եմ

1.Վերականգնել Արմավիրի մարզի, Արագած համայնքի Հաղթանակի պողոտա թիվ 31 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ, քաղաքացիների՝ Վիկտորյա Շմավոնի Բաղդասարյանի /ծնված 01.01.1932թ./, Գագիկ Աղասու Ազատյանի /ծնված 24.01.1964թ./, Շուշան Ռաֆիկի Ազատյանի /ծնված 09.04.1971թ./, Արման Գագիկի Ազատյանի /ծնված 04.08.1989թ./ և Սեդա Գագիկի Ազատյանի /ծնված 24.12. 1990թ./ գույքային իրավունքը՝ ճանաչելով նրանց՝ սեփականության իրավունքը փաստացի օգտագործվող 0.1150 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի

նշանակության օժանդակ շենք-շինությունների, բնակելի տան 68.3 քմ, բնակելի տան 58.0 քմ, բնակելի տան26.6 քմ, բնակելի տան 6.1 քմ, ծածկոցի 33.0 քմ մառանի 18.1 քմ, անասնաշենքի 29.7 քմ, զուգարանի 1.9 քմ, պարիսպի 1.1 քմ նկատմամբ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Վիկտորյա Շմավոնի Բաղդասարյանի /ծնված 01.01.1932թ./, Գագիկ Աղասու Ազատյանի /ծնված 24.01.1964թ./, Շուշան Ռաֆիկի Ազատյանի /ծնված 09.04.1971թ./, Արման Գագիկի Ազատյանի /ծնված 04.08.1989թ./, Սեդա Գագիկի Ազատյանի /ծնված 24.12. 1990թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.0046-0006 ծածկագրին տալ Հաղթանակի պողոտա թիվ 31 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18 թ. մարտ21
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2018թվականի N 17

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումը և Արագած համայնքի բնակիչ Արմեն Իշխանի Թարվերդյանի դիմումը. որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչ Ալվարդ Հակոբի Թարվերդյանին պատկանող 01-014-025-007 ծածկագրով 0.118 հա տնամերձ հողամասի վրա կառուցված 151.5 քմ բնակելի տանը տալ թիվ 1 փողոց թիվ 104 հասցե-համարանիշը:

2. Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18 թ. մարտի 21
գ.Արագած

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-16-11 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2018թվականի N 18

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի չորրորդ մասով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով , որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, շինության տեխնիկական վիճակը բավարար է անվտանգ շահագործման համար, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Վարդան Մարցելուսի Սայադյանի 2018 թվականի փետրվարի 07-ի դիմումը:

Որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի Հաղթանակի պողոտա 30/1 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման Արագած համայնքի սեփականություն հանդիսացող ներքին 48.8 քմ և արտաքին 55.0 քմ. առևտրի սրահը :

2.Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը շինության համար 425.700/չորս հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ է, իսկ հողամասի համար 29.040 /քսանինը հազար քառասուն / ՀՀ դրամ է:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում վճարվի Արագած համայնքի այլ հիմանական միջոցների եկամուտների 900325163203 հաշվեհամարին և հողի օտարումից եկամուտների 900325163138 հաշվեհամարին: Չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

5. Ուժը կորցրած ճանաչել Արագած համայնքի ղեկավարի 21.03.2018թ. թիվ 14 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

20 18թ. մարտի 27
գ.Արագած